

ԿԻՒԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԿԱՏԵՐ ԻՇԽԱՆՆԵՐԸ
XII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIII ԴԱՐԻ ՍԿՂԻՆ

Հ. Մ. ԱՐՇԱՄՅԱՆ

XIII դարի հայ ականավոր պետական գործիչ, զորավար, օրենսգետ և պատմագիր Սմբատ Սպարապետը (1208—1276 թթ.) իր «Տարեգիրք» երկասիրությունում բարեխղճորեն հիշատակել է Կիլիկյան Հայաստանի այն բերդատեր իշխանների անունները, որոնք ուրիշ մեծամեծ աշխարհականների ու հոգևորականների հետ 1198 թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքի Սբ. Սոփիա մայր տաճարում մասնակցել են Լևոն Բ Մեծագործի թագադրման հանդեսին: «Տարեգրքի»՝ մեզ հասած բոլոր ձեռագրերում թվարկված իշխանների հաջորդականությունը, նրանց անուններն ու բերդերի անվանումները, մի քանի աննշան տարբերությամբ, համընկնում և լրացնում են միմյանց: «Տարեգրքի» հրատարակված ձեռագրերում բերված անվանացանկերի՝ համեմատական քննության համաձայն, Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները (պարոնները) կարգված են հետևյալ հաջորդականությամբ.

1. Իշխանն Պաղրսայ Ատանն
Պարոն Ատան՝ տեր Պաղըրու (Պաղրսայ)*
2. Իշխանն Ճկերոյն Օսոն
Պարոն Օստեր՝ տեր Ճկերոյն
3. Իշխանն Համուսին Արեւոյնն
Պարոն Արեւոյն (Արաւոյն)՝ տեր Համուսին
4. Իշխանն Սարվանդաի Սմբատն
Պարոն Սմբատ՝ տեր Սարուանդի քարին
5. Իշխանն Հարունոյն Լեոն
Պարոն Լեոն՝ տեր Հարունոյն
6. Իշխանն Սիմանայ կլային Սիրուհի
Պարոն Սիրուհի՝ տեր Սմանկային
7. Իշխանն Անէոյն Հեոի
Պարոն Հերի՝ տեր Անէոյն (Աշէոյն)
8. Իշխանն Կուտաֆոյն Ապլղարիպ գունդուտապլն
Պարոն Ապլղարիպ Գունդուտապլն՝ տեր Կուտոյն
9. Իշխանն Ընկուզտին Պաղտինն
Պարոն Պաղտին՝ տեր Ընկուզուտին
10. Իշխանն Թոռնկային Ստեֆն
Պարոն Ստեֆ՝ տեր Թոռնկային
11. Իշխանն Բերդուսին Լեոն և Գրիգոր

¹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 209—210, Նույնի, Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 100—101, Նույնի, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 111—112:

* Այսուհետև ճախ կնշեմք «Տարեգրքի» հին և ընդարձակ ձեռագրի Վենետիկի 1956 թ. հրատարակությունում հիշատակված բերդատեր իշխանի անունը, այնուհետև՝ հետագա և համառոտ ձեռագրի Մոսկվայի 1856 թ., իսկ փակագծում՝ Փարիզի 1859 թ. հրատարակություններում տեղ գտած տարբերությունները:

- Պարոն Լևոն՝ տեր Բերդուսին: Պարոն Գրիգոր՝ իր որդին
12. Իշխանն Կանչոյն Աշոտն
Պարոն Աշոտ՝ տեր Եւանչոյն (Կանչոյն)
 18. Իշխանն Տօնօսայ Ապլղարիպն
Պարոն Ապլղարիպ՝ տեր Տօնօսոյ
 14. Իշխանն Կապնուն Տանկրի
Պարոն Մանկրի (Տանկրի)՝ տեր Կապնուն
 15. Իշխանն Ծանճոյն Կոստանդին
Պարոն Կոստանդին՝ տեր Ծանճոյն
 16. Իշխանն Շողականն Ծօֆրի
Պարոն Ծօֆրի՝ տեր Շողականն (Շողկանն)
 17. Իշխանն Մազոտխաչին Սիմունն
Պարոն Սիմուն՝ տեր Մազոտխաչին
 18. [Իշխանն Ամուտոյն Սիմունն]*
Պարոն Սիմուն՝ տեր Ամուտոյն
 19. Իշխանն Թլին Ըռօպերտն
Պարոն Թուպերտ՝ տեր Թլին
 20. Իշխանն Թլսապոյ Թորոս
Պարոն Թորոս՝ տեր Թլսասոյ
 21. Իշխանն Վաներոյն Վասիլ մարաջախտն
Պարոն Վասիլ Մարաջախտն՝ տեր Վաներոյն
 22. Իշխանն Բարձրբերդոյ Գեորգ
Պարոն Գեորգ՝ տեր Բարձր բերդոյ
 28. Իշխանն Կոպիտառոյ Կոստանդին
Պարոն Կոստանդին՝ տեր Կոպիտառոյ
 24. Իշխանն Մօլոփոնին Աժառոսն
Պարոն Աժառոս՝ տեր Մոլիփոնին (Մոլէսնին)
 25. Իշխանն Կուկկայ Սմբատ
Պարոն Սմբատ՝ տեր Կուկկայ
 26. Իշխանն Լամբրունին Հեթում
Պարոն Հեթում՝ տեր Լամբրունին
 27. Իշխանն Լուլայոյ Ծահինշահն
Պարոն Ծահինշահ՝ տեր Լուլայոյ
 28. Իշխանն Պապեռօնին Բակուրան
Պարոն Բարուրան (Պապուրան)՝ տեր Պապառո
 29. Իշխանն Ասկուռոյ Վասակ
[Պարոն Վասակ՝ տեր Ասկուռոյ]**
 80. Իշխանն Մանաշոյ Հեթում
[Պարոն Հեթում՝ տեր Մանաշոյ]**
 81. Իշխանն Բերդկանն Միխայլն
Պարոն Վասակ՝ տեր Բերդկանն***
 82. Իշխանն Պռականոյ Տիգրան
Պարոն Տիգրան՝ տեր Պռականոյ
 88. Իշխանն Սիսիլոյ Օշինն
[Պարոն Օշին՝ տեր Սիսիլոյ]**
 84. Իշխանն Կոռիկօսոյ Սիմունն
Պարոն Սիմուն՝ տեր Կոռիկոսի
 85. Իշխանն Սելեկիոյ և Պունառոյ Կոստանցն
Պարոն Կոստան (Կոստանց)՝ տեր Սիլիֆկոյ (Սելեկիոյ)
 86. [Իշխանն Սինիտոյ Շուպին]**

* «Տարեգրքի» ընդարձակ ձեռագրում այս իշխանի և Ամուտա բերդի անունը քա-
ցակայում է:

** «Տարեգրքի» համառոտ ձեռագրերում այս բերդատեր իշխանները չեն հիշատակ-
վում:

*** «Տարեգրքի» համառոտ ձեռագրերում ակներևաբար գրչագրական սխալ է տեղի
ունեցել. Բերդիկի տեր Վասակին պետք է նույնացնել Ասկուռասի տիրոջը:

**** «Տարեգրքի» ընդարձակ ձեռագրում Շուպին-Ջուպին իշխանը չի հիշատակվում,
իսկ Սինիտի տեր է հիշվում Կովաս բերդի իշխան Թումանոսը (տե՛ս հաջորդ ծանոթա-
գրությունը):

- Պարոն Ծոսլին՝ տեր Սինիտոյ
87. Իշխանն Սինիտու և Կովասու Ռոմանոսն
Պարոն Ամանոս՝ տեր Ատառօսոյ
88. Իշխանն Վէտին և Վէռըսկու Նիկիֆօն
Պարոն Նիկիֆօն՝ տեր Վէնկիսոյ (Վոնկիսոյ)
89. Իշխանն Լավզատոյ և Տիմիտուպօլսոյ Խոսօֆօրն
Պարոն Խոսաֆ՝ տեր Լաւզատոյ
40. Իշխանն Մանիօնին, Լամօսոյ, Ժեոմանկանն և Անամուռին
Հալկամն
Պարոն Հալկամ՝ տեր Լամօսոյ և Ժամնկանն և Անամուռին
41. Իշխանն Նորբերդոյ և Կօմանտիասոյ սեւաստիօսն Հեոի
Պարոն Հեոի Ակաստոս՝ տերն Նոր բերդոյ
42. Իշխանն Անդօշծին և Կուպային Պաղտինն
Պարոն Պաղտին՝ տեր Անդուշծին և Կուպային
43. Իշխանն Մաղվայոյ և Սիկոյ և Պալապօլին Կեոսակն
Պարոն Կեոսակ՝ տեր Մաղվոյ և Սիկոյ
44. Իշխանն Մանովղատին և Ալարոյ Միխալլն
Պարոն Մեխալլ՝ տեր Մանովղատին և Ալարոյ
45. Իշխանն Լակուաւենոյ Կոստանդինն և Նիկիֆօն
Պարոն Կոստանդին՝ տեր Լագուաւենոյ:
Պարոն Նիկիֆօն՝ իւր եղբայր
46. Իշխանն Կալագօցօսոյ, Այժուտապին, սուրբ Սոփէ և
Նաղլօնին Կեովարդն
Պարոն Կեովարդ՝ տերն Աղօլին և Կոտրասոյ

Վերոհիշյալ բերդատեր իշխաններից շատերին, բարեբախտաբար, տարբեր առիթներով և տարբեր հանգամանքներում իրենց երկեում անդրադարձել են նաև հայ և օտարազգի ուրիշ պատմագիրներ, իսկ մի շարք իշխաններ հիշատակվում են զանազան շնորհագրերում: Այդ տեղեկությունների համադրական վերլուծմամբ մեկնաբանվում և հաստատվում են քննարկվող նյութին վերաբերող մի շարք հարցեր:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքում» հիշատակագրված անվանացանկի հաջորդականութամբ նախ փորձենք պարզաբանել Կիլիկյան Հայաստանի բերդատեր պարոնների ինքնությունը:

1. Իշխանն Պաղրայ Ատանն Պարոն Ատան՝ տեր Պաղըրու

Պաղրաս բերդը գտնվում էր Ամանոսի լեռնաշղթայի հարավային հատվածի նույնանուն լեռնանցքի մոտ²: Կիլիկիայի հարավարևելյան այդ կարևոր դարպասը՝ Պաղրաս բերդով հանդերձ, 1190/1191 թթ. Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինից վերջնականորեն ազատագրել է Լևոն Բ Մեծագործը, որի մասին տեղեկություններ են հայտնում Իբն ալ-Ասիրը և Աբու-լ Ֆարաջը³: Նշանակում է՝ առաջնակարգ Պաղրաս բերդի և համանուն կապանի հրակողությունը Լևոն Բ իշխանապետն ազդեցիկ իշխան Ատանին հանձնարարել է 1190/91 թթ. հետո: Սկզբնաղբյուրներում Պաղրասի տեր Ատանը հիշատակվում է նաև Սիր Ատան, Սիր Ադան կամ Ադամ անվանաձևերով: Միխայել Ասորին նրան հույն է անվանում՝ «Սիր Ատանն, որ էր ազգաւ Հոռոմ»⁴: Սակայն հայտնի է, որ պատմագիրները «հոռոմ» կարող էին անվա-

² Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 425:

³ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, Արաքսահայ աղբյուրներ Բ, Իբն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 272—278, The Chronography of Gregory Abu'l Faraj, tr. by E. W. Budge, London, Oxford, 1932, page 336:

⁴ Միխայել Ասորի, Փամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 515:

նել նաև ցանկացած հունարարական հայի: Այդ է հաստատում Կիրակոս Գան-
 ձակեցին, գրելով. «սիր Ատանն, որ էր հոռոմ դաւանութեամբ»⁵: Ուստի
 միանգամայն համոզիչ է թվում Ղ. Ալիշանի այն կարծիքը, որ Ատանը Վաս-
 պուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու որդի Ատոմի սերունդն էր⁶:
 Մմբատ Սպարապետի վկայությամբ Սիր Ատանը Լևոն Բ թագավորի արքու-
 նիքում վարել է Հայոց սենեսկալի գործակալությունը⁷: Նույն պատիճը Սիր
 Ատանի բուն տիրույթն է համարում Արևմտյան կամ Քարուտ Կիլիկիայի
 ծովափնյա այն լայնատարած գավառը, որը հայտնի է «աշխարհ Սիրատնայ»
 անվանումով. «... զմեծ իշխանն Սիրատան, որ էր տէր բազում բերդից և
 գաւառաց, ի Սելեւկիոյ մինչև մերձ ի Կալսոնօրօս, որ անուամբ նորա կոչի
 մինչև ցայսօր՝ աշխարհ Սիրատնայ»⁸: Արու-լ Ֆարաջ (Բար-Հեբրեոս) պատ-
 միչը նրա լայնածավալ տիրույթների մասին գրում է. «Սիր Ադան պալլ
 (S'ra Dan Pali)՝ ծովափնյա բերդերի տեր»⁹: Իշխան Ատանը Լևոն Բ արքայի
 շնորհած առևտրական և հողակալվածային արտոնագրերում բազմիցս ստո-
 րագրել է «Ադամ Գաստոնի տեր»՝ ավելացնելով արքունիքում վարած սե-
 նեսկալի իր պաշտոնը (Adam de Guastone, Senescalcus)¹⁰: 1215 թ. ջենո-
 վացի վաճառականներին Լևոն Բ թագավորի շնորհած առևտրական մի ար-
 տոնագրից տեղեկանում ենք, որ Ադամ-Ատանն իր տիրույթներում ուներ
 մաքսատուն, որտեղ ջենովացի առևտրականները պարտավոր էին վճարել
 մաքս¹¹: Հայոց ավատապետական համակարգում մեծ իշխան Ատան-Ատոմի
 բարձր դիրքի մասին է վկայում նաև այն իրողությունը, որ Լևոն Բ արքան
 մահից առաջ նրան հանձնարարեց իր դստեր՝ մանկահասակ գահաժառանգ
 Զապելի խնամակալությունը և առաջին պալլի նախապատիվ պաշտոնը: Սըմ-
 բատ Սպարապետն այդ կապակցությամբ գրում է, որ Լևոն Բ թագավորը
 «... տղայ դստերն իւրոյ Զապիլի, զոր թողոյր ժառանգ տէրութեան իւրոյ.
 դնէր զմեծ իշխանն Սիրատան... եւ էր սա աշտիճանաւ սենեսկալ Հայոց,
 որում յանձն առնէր թագաւորն զգոլստրն իւր, հանդերձ պալլին...»¹²: Սիր
 Ատան պալլը դավադրությամբ սպանվեց 1221 թ. Սիս մայրաքաղաքում
 Հաշիշյանք կոչվող ելուզակների ձեռքով¹³, հավանաբար Կոստանդին Գուն-
 դըստաբլ երկրորդ պալլի կամակցությամբ:

2. Իշխանն Մկերոյն Օսոն Պարոն Օստեր՝ տէր Մկերոյն

Ալեքսանդրեկի ծոցի հյուսիս-արևելյան առափնյակում տարածվող ձկեր
 գավառի¹⁴ և համանուն բերդի տեր Օստին-Օստեր իշխանը մեր համոզմամբ
 Թաբարացի կամ Տիբերացի (de Tiberiade, de Tabaria) այն ֆրանկ ազնը-
 վականն է, որը Հոստիուս (Hostius), Օթոն (Otto), Օստո (Osto) անվանա-
 ձևերով ստորագրել է Լևոն Բ թագավորի շնորհած առևտրական և հողային

⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 187:

⁶ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 318—315:

⁷ Մմբատ Սպարապետ, նշվ. աշխ., Վեներտիկ, 1956, էջ 222:

⁸ Նույն տեղում:

⁹ The Chronography of Gregory Abu'l Faraj, p. 376:

¹⁰ V. Langlois, Le tresor des chartes d' Arménie ou Cartulaire de la chancellerie, Venise, 1863, p. 116, 123, 125, 126:

¹¹ Տե՛ս Առլյն տեղը, էջ 126:

¹² Մմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 222:

¹³ Տե՛ս Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 515:

¹⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 411, 459, 488:

արտոնագրերում¹⁵: նա նույնպես իր տիրույթում ուներ եկամտաբեր մաքսատուն¹⁶:

**8. Իշխանն Համուսին Արեգոյն
Պարոն Արեգոյն (Արագոյն)՝ տեր Համուսին**

Համուս բերդը գտնվում էր Թիլ Համդուն գավառից արևելք, Ջահանի գետահովտում¹⁷: Լևոն Բ-ի թագադրման հանդեսին մասնակից ֆրանկ ազնվավատհմիկ իշխանների թվում ժամանակակից պատմագիր Վիլհելմ Սուրացին (Տյուրոսցի) հիշատակում է Հենրի Արագոնացուն¹⁸, որն էլ հենց, մեր կարծիքով, նույն ինքը՝ Համուս բերդի տեր Արեգույն-Արագույնն է:

**4. Իշխանն Սարվանդաի Սմբատն
Պարոն Սմբատ՝ տեր Սարուանդի քարին**

Դաշտային Կիլիկիայի արևելյան սահմանները հսկող և Ջահան գետի միջին հոսանքի շրջանում գտնվող Սարվանդավ (հիշատակվում է նաև Սարավան, Սարվանդիքար, Սարավանի քար անվանաձևերով) բերդի տեր Սըմբատը Վասակի որդին էր, Կոստանդին Գունդստաբլի եղբայրը, Օշինյան-Հեթումյան տոհմի Սարավանյան ճյուղի հիմնադիրը¹⁹:

**5. Իշխանն Հարունոյն Լեոն
Պարոն Լեոն՝ տեր Հարունոյն**

Հարուն բերդը նույնպես գտնվում էր Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանում, Ջահանի գետահովտում, ձկեր գավառի մերձակայությամբ²⁰: Հարուն բերդի տեր Լևոնը (Levonus de Biulum) Կիլիկյան Հայաստանի մի շարք երևելի իշխանների հետ ստորագրել է Լևոն Բ թագավորի 1214 թ. այն երկու պարզեագրում, որոնցից մեկով Հիվանդախնամների միաբանությանը (Հոսպիտալիերների օրդենին) շնորհվում էր Վաներ բերդը²¹, մյուսով՝ ձկեր գավառը²²: 1190/91 թթ. Սայահ ադ-Դինի հրուսակներից Գաստոն բերդի ազատագրման կապակցությամբ Վիլհելմ Սուրացու շարունակողը Լևոն Բ իշխանագետի զինակիցների թվում հիշատակում է նաև նրա զարմիկ Ֆուլք դ' Բուլիոնին²³: Ռուդ-Քոլենբերգը պարզաբանել է, որ Լևոն Բ-ի հորաքույրն ամուսնացել էր անտիոքցի մի ասպետի (Chevalier de Bullion) հետ, որոնց որդին էր Ֆուլք դ' Բուլիոնը, իսկ վերջինիս որդին էր Հարուն բերդի տեր Լևոն իշխանը²⁴:

**6. Իշխանն Սիմանայ կային Սիրուհի
Պարոն Սիրուհի՝ տեր Սմանկային**

Անազարբայի մատույցները պաշտպանող Սիմանկլա բերդի²⁵ տեր Սի-

¹⁵ St' u V. Langlois, Cartulaire..., p. 115—116, 122—123, 126:

¹⁶ St' u, Գույն տեղը, էջ 126:

¹⁷ Ղ. Ալիշան, Գշվ. աշխ., էջ 206:

¹⁸ St' u Recueil des Historiens de Croisades, Historiens Occidentaux, t. I, Paris, 1844, p. 610:

¹⁹ St' u Ղ. Ալիշան, Գշվ. աշխ., էջ 209:

²⁰ St' u Գույն տեղը, էջ 204, 206:

²¹ St' u V. Langlois, Գշվ. աշխ., էջ 122—123:

²² St' u Գույն տեղը, էջ 124—125:

²³ RHC, Historiens Occidentaux, t. II, L' Estoire de Eracles Empire, XXIV, 25, XXXI, 6:

²⁴ W. H. Rüd't-Collenberg, The Rupenides, Hethumides and Lusignans, Paris, 1863, table I (Rup).

²⁵ St' u «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ դարեր», կազմ. Ա. Մաթևոսյան, Երևան, 1988, էջ 227:

րուհու անունը մատնանշում է նրա կին լինելը, որը նկատել է դեռևս Ղ. Ալիշանը²⁶: Մեր կարծիքով Սիրուհու անձը պարզաբանվում է պատմագիր Անանուն Եղեսացու հետևյալ տեղեկությամբ. «Մլեհի կինը հայոց Գրիգոր կաթողիկոսի քույրն էր: Երբ Մլեհն սպանվեց, և իշխանության գլուխ անցավ Ռուբենը, կաթողիկոսը գնաց այնտեղ և, վերցնելով քրոջը, բերեց Հոռմկլա: Ռուբենը վերջինիս երեք բերդ տվեց Կիլիկիո երկրում. մեկը կոչվում էր Քեֆա դ-Սարնուզ, մյուսը՝ Սիման, երրորդը՝ Բանբին»²⁷: Անտարակույս, ասորի պատմագրի հիշատակած Սիման բերդը նույն Սիմանա կլայն է, իսկ բերդատերը՝ Հայոց Մեծ իշխան Մլեհի (1169—1175 թթ.) այրիացած տիկինը՝ Սիրուհին, որը ներսես Շնորհալու ավագ եղբայր Վասիլ Պահլավունու զուտրն էր և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քույրը:

7. Իշխան Անէոյն Հեռի Պարոն Հերի՝ տէր Անէոյն

Զահան գետի միջին հոսանքի շրջանում գտնվող Անե բերդի²⁸ տեր Հեռի (լատ.՝ Henri) իշխանի անունը մատնանշում է նրա ֆրանկական ծագման մասին:

8. Իշխան Կուտաֆոյն Ապլղարիպ գունդուստապլն Պարոն Ապլղարիպ Գունդուստապլն՝ տէր Կուտոյ

Կուտաֆ կամ Կուտո բերդը Ղ. Ալիշանը և Մ. Հովհաննիսյանը տեղադրում են Սիմանկլայի և Ընկուզուտի միջև²⁹: Այդ ենթադրության հիմք է ծառայել այն, որ բերդատեր իշխանների անվանացանկում Կուտաֆը թվարկված է Սիմանկլայից հետո և Ընկուզուտից առաջ: Սակայն վերջին բերդերը միմյանցից հեռու են շուրջ 100 կմ. ձգվող տարածությամբ: Մեր կարծիքով Կուտաֆ բերդը գտնվում էր Ամուտայի մերձակայքում, որովհետև Լևոն Բ արքան 1212 թ. Տևտոնական օրդենին պարգևել է Զահանի միջին գետահովտում ընկած Ամուտա բերդը, ինչպես նաև շրջակա հողերը՝ Կուտաֆ (Ludapus) բնակավայրով և նույնանուն եկեղեցով հանդերձ³⁰: Կուտաֆ բերդի տեր Ապլղարիպ Գունդուստարյն ազգությամբ հայ էր, թերևս Արծրունյաց տոհմի շառավիղ: Ռուբեն-Ռաջմոնդի անունից 1207 թ. մարտի 17-ին Հիվանդախնամների միաբանությանը տրված շնորհագրում երևելի իշխանների հետ ստորագրել է նաև Աբլղարիբը՝ «Եբուրգարիբ, Հայոց թագավորության սպարապետ» (Eburgarib, rogni Armenie comestabulis) մականորությամբ³¹:

«Տարեգրքի» անվանացանկերում հաջորդ՝ 9—20-րդ տեղերում թվարկված իշխանները տիրել են Զահան գետի միջին և, հատկապես, վերին հոսանքի շրջանում՝ Լեռնային Կիլիկիայի արևելյան հատվածում (Մարաշի, Զեյթունի, Կապանի շրջաններում) գտնվող բերդերին³²: Նրանցից հաստատապես ֆրանկ իշխաններ են՝ Ընկուզուտի բերդատեր Պաղտինը, Խոռնկա բերդատեր Ստեֆը, Կապնու բերդատեր Տանկրին, Շողականի բերդատեր ձոֆրին և Թլի բերդատեր Ռուպերտը: Վիլհելմ Սուրացին Լևոն Բ իշխանա-

²⁶ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 200:

²⁷ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 12, «Ասորական աղբյուրներ» Բ, Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, Երևան, 1982, էջ 135:

²⁸ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 196:

²⁹ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 202, Մ. Հովհաննեսյան, Կիլիկիոյ Հայոց բերդերն ու բերդաքաղաքները, Վեներտիկ, 1989, էջ 213:

³⁰ V. Langlois, Աշխ., էջ 118—119:

³¹ Տե՛ս Անյուն տեղը, էջ 180—181:

³² Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 191—201, Մ. Հովհաննեսյան, Աշխ., էջ 170—173, 176, 183, 193:

պետի թագադրման հանդեսին մասնակցած ֆրանկ իշխանների շարքում հիշատակում է Բալդուին, Տանկրեդ և Ջոֆրի ազնվականներին³³, որոնք, անկասկած, նույնանում են Ընկուզուտի իշխան Պաղտինի, Կապանի իշխան Տանկրիի և Շողականի իշխան Ճոֆրիի հետ: Ընդ որում, Շողականի բերդատեր Ճոֆրի-Ջոֆրին նույն Հիվանդախնամների միաբանության մարաշախտ Կոփրետոսն է, որն այդ օրոգենին 1210 թ. Լևոն Բ թագավորի պարգևած հողաշնորհագրում հիշվում է «եղբայր Գոֆրեդուս, մարեսկալ» (frater Gofredus, marescalcus) մականգրությամբ³⁴: Սմբատ Սպարապետը թերևս նկատի ունի այդ իշխանին, որի մահվան կապակցությամբ գրում է. «Ի թուին 2Դ (1255) իշխանն Ճոֆրի յերկրէն Կիլիկիոյ, որ էր ներքինի ի մարդկանէ եղեալ, և էր ազգաւ քրիստոնեայ, բարիոք խոստովանութեամբ փոխեցաւ ի կենցաղոյս»³⁵: Համդուն գավառի Թիլ բերդի³⁶ տեր Ռոբերտին Վիլհելմ Սուրային հիշատակում է Լևոն Բ-ի թագադրման հանդեսին մասնակցած ֆրանկ իշխանների ցանկում³⁷: Հիվանդախնամների միաբանությանը Ռոբեն-Ռայմոնդի կողմից 1210 թ. տրված շնորհագրում Լևոն Բ թագավորի և Օթոն դ' Տաբարիայի պատվավոր ընկերակցությամբ ստորագրած Ռոբերտ Տալի (Robertus Tali)³⁸ ֆրանկ ազնվականը, մեր կարծիքով, հենց նույն Թիլ բերդի տեր Ռոպերտ-Լոպերտն է:

«Տարեգրքի» անվանացանկերի 9—20-րդ տեղերում թվարկված իշխաններից ազգությամբ հայեր են՝ Բերդուսի տեր Լևոնը և իր որդի Գրիգորը, Կանչո բերդատեր Աշոտը, Ֆոոնոսի բերդատեր Ապլղարիպը, Ճանճո բերդատեր Կոստանիներ, Մազոտխաչի բերդատեր Սիմոնը, Ամուտո բերդատեք Սիմոնը և Թլսապո բերդատեր Թորոսը: Հիշյալ հայ իշխանների մասին, ըսվոք, սկզբնաղբյուրներում այլ տեղեկություն չի հանդիպում: Բայց պարզաբանված ու ճշտված են նրանց բերդերի տեղերը, որոնք գտնվում էին հիմնականում Զահան դետի վերին հոսանքի, մասամբ՝ միջին հոսանքի շրջաններում³⁹: Միայն տարակարծություններ կան Թորոս իշխանի տիրած Թլսապո բերդի տեղադրության հարցում: Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» համատող օրինակում այն պահպանվել է Թլսասո աղավաղված գրությամբ, որն էլ հիշեցնում է Եղեախաչից արևմուտք ընկած Թլսաշար քաղաքի անվանումը: Մինչդեռ Թլսապոն հիշվում է Տեսոնական օրոգենին 1212 թ. Լևոն Բ թագավորի տված մի շնորհագրում, որպես Ամուտա բերդի մերձակայքում բռնած բնակավայր՝ torunum de Sabuhe լատինական անվանաձևով⁴⁰: Լատիներեն torunus նշանակում է «բլուր» կամ «բլրաթումբ», որը համապատասխանում է սեմական «թիլ» իմաստին: Ուստի իրավացի է Ղ. Ալիշանը, որը Թլսապ բերդանունը նույնացնում է Թիլ Շապուհ բերդանվանը⁴¹:

Հաջորդ՝ 21—30-րդ տեղերում Սմբատ Սպարապետը կարգել է այն իշխաններին, որոնք տիրել և հսկել են Կիլիկյան Տավրոսի լեռնաշղթայի կենտրոնական հատվածի կամ Լեռնային Կիլիկիայի արևմտյան շրջանների բերդերը:

22. Իշխանն Վաներոյն Վասի մարաշախտն Պարոն Վասի Մարաշախտն՝ տեր Վաներոյն

³³ Տե՛ս RHC, Hist. Occ., t. I, Willermus Tyrensis, p. 610.

³⁴ Տե՛ս V. Langlois, Ազվ. աշխ., էջ 115—116:

³⁵ Սմբատ Սպարապետ, Տարեգրք, Վենետիկ, 1958, էջ 230:

³⁶ Տե՛ս Ղ. Ալիշան, Ազվ. աշխ., էջ 204—205:

³⁷ Տե՛ս RHC, Hist. Occ., t. I, Willermus Tyrensis, p. 610:

³⁸ Տե՛ս V. Langlois, Ազվ. աշխ., էջ 182—183:

³⁹ Տե՛ս Ղ. Ալիշան, Ազվ. աշխ., էջ 191—201, Մ. Հովհաննեսյան, Ազվ. աշխ., էջ 170—173, 176, 183, 193, 199:

⁴⁰ Տե՛ս V. Langlois, Ազվ. աշխ., էջ 117—119:

⁴¹ Տե՛ս Ղ. Ալիշան, Ազվ. աշխ., էջ 201:

Վաներ կամ Վանավեր բերդը գտնվում էր Մուլեոն գավառում⁴²։ Մի-
խայել Ասորին վկայում է, որ Քորոս Բ Մեծ իշխանի գահակալման վերջին
տարիներին այդ բերդը սեփականացրել էր նրա եղբայր Մլեհը⁴³։ Սմբատ
Սպարապետի վկայությամբ Վաներ բերդի տերն էր Լևոն Բ Մեծագործի ար-
քունիքում մարազախտովի գործակալությունը վարող Վասիլ իշխանը։
Լևոն Բ թագավորի անունից Հիվանդախնամների միաբանությանը 1210 թ.
Լարանդան պարգևելու շնորհագրում Վասիլ մարազախտն ստորագրել է «Ba-
silius, marescalcus» լատիներեն մականությունով⁴⁴։ 1201 թ. մի հիշատա-
կությանում մատնանշվում են Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը (1194—
1203 թթ.) և «զՏարազատ եղբայրս իւր զՊարոն Միխայլն և զՊարոն Վա-
սիլն»⁴⁵։ Իսկ այդ երեք եղբայրները Մլեհի կնոջ՝ Սիրուհու հորեղբոր որդի-
ներն էին⁴⁶։ Ինչպես նշեցինք, ըստ Անանուն Եղեսացու, Մլեհի դավաճարական
մահից հետո, Ռուբեն Գ Մեծ իշխանը նրա այրուն պարգևեց Քեֆա դ-Սար-
նուդ, Սիման և Բանբին կամ Բանբիր բերդերը⁴⁷։ Մեր կարծիքով, ասորական
Bānbin կամ Bānbir գրությունները հիշատակված բերդանունը նույնանում է
հայկական աղբյուրներում պահպանված Վաներ կամ Վանավեր բերդան-
վանը։ Գրանից հետևում է, որ Վաներ բերդը Սիրուհին հետագայում պար-
գևել է իր հորեղբոր որդուն՝ Վասիլ Մարազախտին։

22. Իշխանն Բարձրբերդոյ Գեորգ Պարոն Գեորգ՝ տեր Բարձր բերդոյ

Սարոս (Սիհուն) դետի ձախափնյա վտակներ Մամնդավի և Գորգունի
վերին հոսանքների շրջանում, Մուլեոն գավառից արևելք տարածվող Բարձր-
բերդ գավառի նույնանուն բերդի⁴⁸ տեր Գեորգ իշխանը, մեր կարծիքով, Մեծ
իշխան Մլեհի որդին է, որն սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև Գորգ
տնունով⁴⁹։ Սմբատ Սպարապետը գրում է, որ Լևոն Բ թագավորը Ռուբեն-
Ռայմոնդին Հայոց գահաժառանգ հռչակելուց հետո «կալալ զիշխանն Գորգ,
գորդի Մլեհին ոչ յօրինաւոր ամուսնութենէ, և ետ խաւարեցուցանել զաշս
նորա, քանզի էր այր գոռոզամիտ և ի զինուորութիւնս արիագոյն, և սեղա-
նով առատ, և բազումք յարեալ էին ի նա և սիրէին զնա, յորս և կասկածէր
թագաւորն յաղապս հակառակ յսոնելոյ ժառանգութեան, սպասելով զիպող
ժամու։ Եւ զայս այսպէս արարեալ ի քսու ռմանց»⁵⁰։ Գեորգ իշխանի մասին
Մեծքար վանքում այդ տարիներին գործած Գրիգոր գրիչը դառնակակիծ հի-
շատակադրում է. «Սա որդի էր իշխանաց իշխանին մեծին Մլեհի, հաւրեղ-
բարորդի թագաւորին Լեւոնի, եւ էր սա քաջ եւ յաղթող ի պատերազմի,
առատաձեռն, առատասեղան, բաշխաւղ աղքատաց, պարգեատու զինուո-
րեալ մարդոց։ Ապա աստանաւր ամանչեմ ասել զազգիս մերոց զնենգութիւն
եւ զշար կարծիս առ իրեանս, որ ի սկզբանէ նախանձուք եւ ընկերատեայք
լեալ են։ Եւ մարդիկ ռմանք շարք եւ քամոսք մտեալ առ թագաւորն ասեն
եթէ ազգային քո Գեորգ հակառակ է թագաւորութեան քո։ Մինչ զի աստուա-

⁴² Տե՛ս Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 142—143, V. Langlois, Աշվ. աշխ., էջ 122:

⁴³ Տե՛ս Միխայել Ասորի, Աշվ. աշխ., էջ 454:

⁴⁴ Տե՛ս V. Langlois, Աշվ. աշխ., էջ 115—116:

⁴⁵ Տե՛ս Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսի-
թարևանց ի Վեհտիկ, Վեհտիկ, 1914, էջ 167—168:

⁴⁶ Տե՛ս W. Rüdtt-Collenberg, Աշվ. աշխ., table IV (Saven-Pahlavuni):

⁴⁷ Տե՛ս «Օտար աղբյուրներ...», Անանուն Եղեսացի, Աշվ. աշխ., էջ 185, 290:

⁴⁸ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 147—148:

⁴⁹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշվ. աշխ., էջ 216—217: «Հայերեն ձեռագրերի Ռիչա-
տակարաններ», ԺԳ դար, Երևան, 1984, էջ 87—88:

⁵⁰ Սմբատ Սպարապետ, Աշվ. աշխ., էջ 216—217:

ծասէր և բարեպաշտ թագաւորն ի ցասումն շարժեալ կալաւ զազգային իւր զմեծն Գեորգ, յափշտակեաց զամենայն ինչս նորա եւ եղ զնա ի բանդի ի դղեակ եւ յանառիկ բերդին Սիսոյ թագաւորաբնակ քաղաքին, եւ ի նմին աւուր խաւարեցոյց զաշս նորա, ի թուականին Հայոց ի ՈՍԷ (1208/1209 թ.)»⁵¹: Նույն գրիչը տեղեկացնում է, որ կուրացած Գեորգ իշխանն այնուհետև հաստատվել է «ի հայրաշէն վանս իւր, զոր հայրն իւր բարեպաշտ Մեծն Մլխհ շինեալ էր զհոշակավոր անապատս Մեծքար և զմեծ եկեղեցին յանուն Տիրամարն... եւ յայսմ ամի շինեաց եկեղեցի ի վերայ քնարանի սրբոց եւ շինեաց պուսպիլս առաջի դրանց սրբոց եկեղեցեացն, մաւր ի դիրս սրբոյն, որ ի հունական կոչի դրան պահ, եւ անուանեաց զնա իւր տապանատուն, զի ի վախճանին իւրոյ անդ թաղեցին զնա»⁵²: Գեորգ իշխանի մահվան տարին նշվում է 1214 թվականը⁵³:

23. Իշխանն Կոպիտառոյ Կոստանդին
Պարոն Կոստանդին՝ տէր Կոպիտառոյ

Կոպիտառ զավառը և համանուն բերդը գտնվում էին Բարձրբերդ և Մուլեոն զավառների անմիջական սահմանակցութեամբ, նրանց միջև⁵⁴: Մատթեոս Ուոհայեցու վկայութեամբ Տավրոսի լեռներում գտնվող Կոպիտառ զավառը Ռուբինյանների տոհմատիրութի մեջ էր մտնում դեռևս Հայոց Մեծ իշխան Կոստանդինի գահակալման տարիներին (1095—1100 թթ.)⁵⁵: XII դարի վերջին և XIII դարի սկզբին Կոպիտառ բերդի իշխանն էր Կոստանդինը, որը, թերևս, Ռուբինյան տոհմի շառավիղ էր:

24. Իշխանն Մոլոկոնի Ածառոն
Պարոն Ածառոս՝ տէր Մոլոկոնի

Մոլոկոն, Մուլիվոն, Մոլեոն անվանաձևերով հիշատակվող զավառը և նրա համանուն բերդը գտնվել են Լեոնային Կիլիկիայի Բարձրբերդ զավառոց անմիջապես արևմուտք և Լամբրոն զավառից հյուսիս⁵⁶: Կիլիկյան Տավրոսի լեռնաշղթայի կենտրոնական հատվածում տիրող բոլոր բերդատեր իշխանները հայիր էին, ուստի հազիվ թե բացառութիւն կազմեր Մոլեոնի բերդատեր իշխան Ածառոսը (Ազարիոս): Թեև Ղ. Ալիշանը, ելնելով նրա օտարահունչ անունից, ենթադրում է, որ նա կարող էր հույն լինել⁵⁷:

25. Իշխանն Կուկլայ Սմբատն
Պարոն Սմբատ՝ տէր Կուկլայ

Կիլիկյան Տավրոսի լեռնաշղթայի կենտրոնական հատվածում գտնվող Դուոն Կիլիկիո, Անցք Կիլիկիո կամ Կապանն Կիլիկիո անվանումներով հիշատակվող լեռնանցքը հսկել է Կուկլակ բերդը⁵⁸: Այդ լեռնանցքն իր հսկող բերդի անվանումով հաճախ կոչվել է նաև Կապանն Կուկլակա, Բերդ Կապանին, Կուկլակն Հայոց: Մաքսատուն ունեցող Կուկլակի բերդատեր իշխան Սմբատը հավանաբար Օշինյան-Հեթումյան իշխանատան ներկայացուցիչ էր, բայց ոչ «եղբայրն արքայահօրն Կոստանդեայ», ինչպես ենթադրում

⁵¹ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար, էջ 87—88:

⁵² Տե՛ս Աույն տեղը:

⁵³ Տե՛ս Աույն տեղը:

⁵⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 157:

⁵⁵ Տե՛ս Մաթթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 276:

⁵⁶ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշվ. աշխ., էջ 61, 141—142:

⁵⁷ Տե՛ս Աույն տեղը, էջ 142:

⁵⁸ Տե՛ս Աույն տեղը, էջ 129—130:

է Ղ. Ալիշանը⁵⁹, որովհետև Կոստանդինի եղբայր Սմբատը Սարվանդիթաբի բերդատերն էր:

**26. Իշխանաց Լամբրունցի Հեթում
Պարոն Հեթում տեր Լամբրունցի**

Լամբրուն բերդը գտնվում էր նույնանուն գավառում, Տավրոսի լեռնաշղթայի կենտրոնական հատվածի հարավային ստորոտում, Տարսոն գետի աջափնյա վտակ Բերդաջրի ափին⁶⁰: 1073 թվականից Լամբրունում իշխում էին Օշինյան-Հեթումյան իշխանատան ավագ ճյուղի՝ բյուզանդական «սեբաստոս» տիտղոսով մեծարվող ներկայացուցիչները⁶¹: 1175 թվականից Լամբրունի բերդատեր իշխանն էր Օշին Բ Սեբաստոսի որդի Հեթում Գ (1151–1218 թթ.)⁶², որը 1198 թ. մասնակցեց Լևոն Բ-ի թագադրման հանդեսին: Հեթումյանների անջատամետ ձգտումները սանձելու նպատակով Լևոն Բ արքան 1201 թ. Հեթում Գ-ին խնամհանայու պատրվակով հրավիրեց Տարսոն, նրան բանտարկեց Վահկայում, առանց մարտի զրավեց Լամբրունը և այն դարձրեց արքունի տիրույթ⁶³: 1203 թ. բանտարկությանից ազատված Հեթումը ձեռնադրվեց կրոնավոր՝ Հեղի նոր անունով, և հաստատվեց Դրագարկի վանքում՝ ստանձնելով վանահոր պաշտոնը⁶⁴: 1210 թ. Հեթում-Հեղին Լևոն Բ-ի հանձնարարության մեկնեց Եվրոպա՝ Իննովկենտիոս Գ պապից և Գերմանիայի Օթոն Դ կայսրից խնդրելու ճանաչել Լևոն Բ-ի որդեգիր Ռուբեն-Ռայմոնդի գահաժառանգման իրավունքն Անտիոքի դքսությանում և Կիլիկիայի Հայոց թագավորությունում⁶⁵: Հեթում-Հեղին մահացել է մոտ 1218 թ., որովհետև Լևոն Բ արքան Դրագարկը՝ 1219 թ. պարգևեց Հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Սսեցուն:

**27. Իշխան Լուլայոյ Շահնշահ
Պարոն Շահնշահ տեր Լուլայոյ**

Լամբրուն բերդից դեպի Չյուսիս-արևմուտք, Կիլիկյան Տավրոսի կենտրոնական հատվածում գտնվող Լուլու կամ Լուլուա բերդի⁶⁶ տեր Շահնշահ իշխանը Հեթում Լամբրունացու և Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրունացու հղբայրն էր: Ներսես Լամբրունացին հունարենից թարգմանած «Օրէնք թագաւորաց»-ի հիշատակարանում գրում է. «Ձայս ծայրաքաղ արինադրութիւնքս տառապեալ եպիսկոպոս Տարսոնի թարգմանեցի ի ծիրացեալ հելլենացի մատենէ, թուին Ռեէ (1198) ի նորաչէն ամուրն Լուլուայ, որ է գլուխ դրանն Կիւղիկոսի, զոր ի բազմաժամանակեայ յամայութենէն մարդաբնակ արար մի յեղբարց իմոց Շահնշահ. և կործանեալ շինուածն յունաց յիսմաեղացոց՝ շինեաց ամրագոյն»⁶⁷:

**28. Իշխան Պապեոսի Բակուրան
Պարոն Բարուրան (Պապուրան) տեր Պապառու***

Պապեոսն կամ Պապառոն բերդը գտնվում էր Լամբրուն գավառում, Լամբ-

⁵⁹ Տե՛ս Առյժ տեղը, էջ 130:

⁶⁰ Տե՛ս Առյժ տեղը, էջ 76:

⁶¹ Տե՛ս Սամուէլ Անեցի, Հատարմունք ի գրոց պատմագրաց, վաղարշապատ, 1893, էջ 117:

⁶² Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշխ. աշխ., էջ 171:

⁶³ Տե՛ս Առյժ տեղում, էջ 211–212:

⁶⁴ Տե՛ս Առյժ տեղը:

⁶⁵ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշխ. աշխ., էջ 217:

⁶⁶ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ. աշխ., էջ 114:

⁶⁷ Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վեներտիկ, 1889, էջ 554–555:

* Ակներևորեն գրագրական վրիպումներ են:

րոն բերդից հարավ-արևմուտք, Տարսոն գետի աջ վտակ Ջաղացաչրի վե-
բին հոսանքի ափին, դժվարամատույց լեռան կատարին⁶⁸: XII դարի առա-
ջին կեսին Պապեռոնի բերդատեր իշխանն էր Օշին Բ Լամբրոնացու եղբայր
Սմբատը, որը զոհվեց 1152 թ. Մամեստիայի ճակատամարտում՝ բյուզան-
դական զորաբանակում Քորոս Բ-ի դեմ մարտնչելիս⁶⁹: Սմբատին հաջորդեց
որդին՝ Բակուրանը, որի քույր Ռիթան Ստեփանե Ռուբինյանի կինն էր:
1165 թ. Ստեփանեի նենգադավ սպանությունից հետո Ռիթան «առեալ զոր-
ւեակա իւր գնաց ի Պապեռոնն առ եղբայրն իւր Բակուրան, և անդ նստեալ
սնուցանէր զնոսա»⁷⁰: 1175 թ. նորընտիր Հայոց Մեծ իշխան Ռուբեն Գ Պա-
պեռոնից Սիս մայրաքաղաք ժամանեց Բակուրանի ուղեկցութեամբ՝ «բա-
զում գանձիւք և արծաթոյ»⁷¹: Պապեռոնի բերդատեր իշխան Բակուրանը
վերջին անգամ հիշատակվում է 1198 թ. Լևոն Բ Մեծագործի թագադրման
հանդեսին մասնակցած բերդատեր իշխանների անվանացանկում:

29. Իշխան Գ Ասկուտոյ Վասակ
[Պարոն Վասակ՝ տեր Ասկուտոյ]

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» համառոտ ձեռագրերում Վասակ իշ-
խանը մատնանշված է ոչ թե Ասկուտասի, այլ Բերդկանի բերդատեր⁷²: Մեր
կարծիքով այստեղ գրչագրական շփոթն ակնհայտ է, որովհետև ընդարձակ
ձեռագրում անխաթար պահպանված է նաև Բերդկանի կամ Բերդիկի բեր-
դատեր իշխան Միխայիլի անունը⁷³: Ասկուտասը սովորաբար մատնանշվում
է Լամբրոն և Պապեռոն բերդերի մերձավորությամբ, հավանաբար դրանցից
անմիջապես արևմուտք⁷⁴: Աբլղարիբ Արծրունին 1073 թ. Ասկուտաս բերդը
և մերձակա հողերը պարզեել էր նախանայելյանց իշխանատանը: Սակայն
XII դարի երկրորդ կեսին Ասկուտասն անցել էր Լամբրոնի և Պապեռոնի
տերերին՝ Օշինյան-Հեթումյաններին: 1165 թ. հետո Ասկուտասի բերդատեր
իշխանն էր Պապեռոնի տեր Սմբատի որդի, Բակուրանի և Հալկամի եղբայր
Վասակը⁷⁵: Վերջինիս որդին էր Հայոց գունդստարը, ավագ պարոն, պալլ և
թագավորահայր Կոստանդինը⁷⁶:

30. Իշխան Գ Մանաշոյ Հեթում
[Պարոն Հեթում՝ տեր Մանաշոյ]

Մանաշ բերդը տեղադրվում է Լամբրոն բերդից հարավ-արևելք, Տար-
սոն գետի միջին հոսանքի աջափնյա շրջանում, Մանաս գյուղի մերձակա
և ավերակ բիրդատեղում⁷⁷: Մանաշի բերդատեր իշխան Հեթումը, հավանա-
բար, Օշինյան-Հեթումյան տոհմի զարմերից էր, որի մասին սկզբնաղբյուր-
ներում այլ տեղեկություններ չեն հանդիպում:

Այնուհետև Սմբատ Սպարապետի «Տարեգրքում» թվարկվում են այն
ավատառու իշխանների անունները, որոնց բերդերն ու հողատիրույթները
տարածվում էին Կիլիկիայի արևմտյան գավառներում:

⁶⁸ Տե՛ս Ղ. Ալիշան, ԳՉՎ. աշխ., էջ 70:
⁶⁹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, ԳՉՎ. աշխ., էջ 170:
⁷⁰ Նույն տեղում, էջ 187:
⁷¹ Նույն տեղում, էջ 192:
⁷² Տե՛ս Սմբատ Սպարապետ, Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 101, Նոդճի, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 112:
⁷³ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 210:
⁷⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, ԳՉՎ. աշխ., էջ 48, 115, 347:
⁷⁵ Տե՛ս Սմբատ Սպարապետ, ԳՉՎ. աշխ., էջ 187:
⁷⁶ Տե՛ս Աույն տեղը:
⁷⁷ Տե՛ս Ղ. Ալիշան, ԳՉՎ. աշխ., էջ 176:

81. Իշխանն Բերդկանն Միխայն
[Պարոն Միխայլն՝ տէր Բերդկանն]

Բերդիկ կամ Բերդկան բերդը գտնվել է Սելևկիա գավառում, Պոսականա բերդից դեպի հյուսիս-արևելք⁷⁸: 1201 թ. մի հիշատակարանում հանդիպող «Տէր Յիսուս հայր Միածին, տուր վայլելիքս զայս ստացողին՝ Պարոն Միխայլի Մեծ իշխանին, եղբայր Հայոց հայրապետին»⁷⁹ տողերը, մեր կարծիքով, վերաբերում են հենց Բերդկանի բերդատեր իշխան Միխայլին: Հայտնի է, որ 1201 թ. Հայոց հայրապետը կամ կաթողիկոսն էր Գրիգոր Զ Ապիրատը: Ուստի իշխան Միխայլը ներսես Շնորհալու եղբոր՝ Շահան Զորավար Պահլավունու որդին էր, Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսի և իշխան Վասիլ մարազխատ Պահլավունու եղբայրը: Բերդկանում Միխայլին հաջորդել է Լեվոն որդին, որի քույրը Կոռիկոսի բերդատեր իշխան Վահրամ մարազխատի առաջին կինն էր⁸⁰:

82. Իշխանն Պոսկանոյ Տիգրան
Պարոն Տիգրան՝ տէր Պոսկանոյ

Պոսկանա բերդը տեղադրվում է Սելևկիա քաղաքից հյուսիս-արևելք, լեռնային շրջանում, դժվարամատույց ժայռի կատարին⁸¹: XII դարի կեսին Պոսկանայի բերդատեր է հիշատակվում հայ իշխան Տիգրանը, որն իր զորաջոկատով բյուզանդական բանակում մասնակցեց 1152 թ. Մամեստիայի ճակատամարտին՝ ընդդեմ Հայոց Մեծ իշխան Թորոս Բ Ռուբինյանի⁸²: Հաղթանակած Թորոս Բ-ն գերի ընկած Տիգրանին և մյուս հայ իշխաններին ազատ արձակեց՝ նրանցից հավատարմության երաշխիք և ռազմատուգանք ստանալուց հետո⁸³: 1198 թ. Լեոն Բ-ի թագադրման հանդեսին մասնակցած ավատառու իշխաններին ցանկում հիշատակված Պոսկանայի բերդատեր իշխան Տիգրանը, մեր կարծիքով, Մամեստիայի ճակատամարտում հիշատակվող և արդին շուրջ 70-ամյա հասակ ունեցող նույն Տիգրանն է: Իսկ Ղ. Ալիշանը ենթադրում է, որ 1198 թ. հիշվող Տիգրանը կարող էր լինել 1152 թ. հիշվող Տիգրանի որդին կամ թոռը⁸⁴:

83. Իշխանն Սիսիոյ Օշիմ
[Պարոն Օշիմ՝ տէր Սիսիոյ]

Սիվիլ բերդը մատնանշվում է Սելևկիա գավառում, Բերդկան և Պոսկանա բերդերի մերձավորությամբ⁸⁵: Սիվիլի բերդատեր Օշիմը հավանաբար Օշինյան-Ղեթումյան տոհմի իշխան էր: 1190 թ. խաչակրաց զորքերի առաջնորդ Ֆրիդրիխ Շիկամորուս կայսերը դիմավորող հայկական պատվիրակության կազմում նշվում է նաև Սիվիլի բերդատեր իշխանը⁸⁶, հավանաբար՝ Օշիմը, որի անունը չի հիշվում:

84. Իշխանն Կոռիկոսոյ Սիմոն
Պարոն Սիմոն՝ տէր Կոռիկոսոյ

Նավահանգստային բերդաքաղաք Կոռիկոսը գտնվում էր Սելևկիա գավառում, Միջերկրական ծովի ափին, Լամասի և Կալիկաղնոսի գետաբերան-

⁷⁸ Տե՛ս Առյճ տեղը, էջ 331, 547:

⁷⁹ Տե՛ս Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ..., Բ. 1. էջ 167—168:

⁸⁰ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 547:

⁸¹ Տե՛ս Առյճ տեղը, էջ 330—331:

⁸² Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշխ., էջ 170—171:

⁸³ Տե՛ս Առյճ տեղը, էջ 171:

⁸⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 330:

⁸⁵ Տե՛ս Առյճ տեղը, էջ 332:

⁸⁶ Տե՛ս Առյճ տեղը, էջ 447:

ների միջնատարածքում⁸⁷; Կոռիկոսն ունեցել է մաքսատուն, որի եկամուտը գանձվել է ոչ միայն տեղի բերդատեր իշխանի, այլ նաև արքունիքի օգտին: 1210 թ. ջենովացի վաճառականներին շնորհած մի արտոնագրում Լևոն Բ արքան նշում է, որ Կոռիկոսում առևտուր անելու համար նրանք պետք է վճարեին սահմանված մաքսը⁸⁸: Եկամտաբեր մաքսատուն ունեցող Կոռիկոսի բերդատեր իշխան Սիմուն-Սիմոնը, մեր կարծիքով, եղել է հայազգի և արքունիքին մոտիկ կանգնած անձ: Դժվար է համաձայնել Ղ. Ալիշանի այն ենթադրությունը, որ Սիմունը «թերևս ի զարմէ իշխանացն Յունաց կամ յունացեցելոց անտի»⁸⁹, Կոռիկոսի՝ Սովաբերդում 1206 թ. թողած արձանագրության մեջ Լևոն Բ թագավորը հիշատակում է այնտեղ կատարած շինարարական վերանորոգումների մասին⁹⁰: Նշանակում է՝ Կոռիկոսը մտել է արքունի տիրույթների մեջ, որի հսկողությունը հանձնարարվում էր վստահելի ավատառու իշխանի: Այսպես, Սիմունից հետո Լևոն Բ արքան Կոռիկոսի բերդատեր իշխան կարգեց Վահրամ Մարաջախտին: Իսկ 1220 թ., ապստամբ Վահրամին ձերբակալելուց հետո, Կոստանդին պայլը «գերագոյն դղեկին Կոռիկոսոյ» տեր կարգեց իր որդի Օշինին⁹¹:

XII դարի վերջերքին և XIII դարի սկզբին Կիլիկիայի հայկական պետության ազնվապետական համակարգում բարձր դիրք են գրավել Կամարտիաս կամ Կումարտիաս (համանուն բերդատիրույթի անվանումով) հորջորջվող իշխանատան ներկայացուցիչները, որոնք տիրել են վաճառաշահ Սելևկիա բերդաքաղաքը և շրջակա մի շարք բերդեր: Դրանք են՝

85. Իշխանն Սելևկիոյ և Պունաոյ Կոստանցն

Պարոն Կոստանց՝ տեր Սելևկիոյ

86. Իշխանն Սիմիտոյ Ջուլին

Պարոն Ջուլին՝ տեր Սիմիտոյ

41. Իշխանն Նորբերդոյ և Կոմաոտիասոյ սեւաստիօսն Լեոի

Պարոն Լեոի Սեաստոս՝ տերն Նոր բերդոյ

42. Իշխանն Անդոշծին և Կուպային Պաղտին

Պարոն Պաղտին՝ տեր Անդոշծին և Կուպային

Կոմարտիասի և Նորբերդի տեր Լեոին, որը մեծարվել է բյուզանդական «սերաստոս» տիտղոսով, ամուսնացած էր Կոստանդին Լեթումյանի դստեր կամ Հայոց կաթողիկոս Նովհաննես է Սսեցու քրոջ հետ⁹²: Լեթումյանների՝ հատկապես Հայոց կաթողիկոսի հետ սերտ մերձավորությունը, թիրևս, մատնանշում է Լեոի իշխանի հայկական ծագման մասին: Իսկոր դեպքերում, Լեթումյան իշխանուհուց և Լեոի իշխանից ծնված զավակներին՝ Անդոշծինի և Կուպայի բերդատեր իշխան Պաղտինին, Սելևկիայի և Պունաոի բերդատեր իշխան Կոստանցին և Սիմիտո բերդատեր իշխան Ջուլինին շենք կարող օտարազգիներ համարել, ինչպես ենթադրում է Ղ. Ալիշանը⁹³, Սմբատ Սպարապետը վկայում է, որ 1207 թ. Լևոն Բ թագավորը «յաղագս պատճառի ինչ իրիք կայաւ զսեւաստիօսն Լեոի, և զորդիս նորա զԿոստանց Կոմարտիասն և զՃօպլին և զՊաղտին և եղ ի կապանս և ի բանտի: Եւ Լեոի փեսայ էր տէր Յոհանիսի կաթողիկոսին Հայոց. և յայսմանէ եղև խոռովութիւն ընդ թագաւորն Լեոն եւ ընդ կաթողիկոսն տէր Յոհանեսս...»⁹⁴:

⁸⁷ Տե՛ս Առլյն տեղը, էջ 332—333:

⁸⁸ Տե՛ս V. Langlois, Աշխ., էջ 116:

⁸⁹ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 333:

⁹⁰ Տե՛ս Առլյն տեղը:

⁹¹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշխ., էջ 244—245, Ղ. Ալիշան, Աշխ., էջ 334:

⁹² Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշխ., էջ 215:

⁹³ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 235:

⁹⁴ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Աշխ., էջ 215:

Կիլիկիայի արևմտյան շրջանների մյուս բերդատերերից հաստատապես հայ իշխաններ էին Մանիոնի, Լամոսի, Ժեոմանիկեի (Գերմանիկոպոլիս) և Անամուռի տեր Հալկամը և Կալոնոոս, Այծուտապ, Սուրբ Սոփե և Նաղլուն բերդերի տեր Կեոզարդը (Կիո Վարդ): Հալկամը Պապեոնի բերդատեր Սմբատի որդին էր, Վասակի և Բակուրանի կրտսեր եղբայրը: Սմբատ Սպարապետը 1165 թ. դեպքերի կապակցությամբ գրում է. «Բակուրնայ և Վասակայ եղբայր մի այլ կայր Հալկամ անուն»⁹⁵; 1165 թ. պատանի Հալկամը դեռևս բերդատեր չէր, իսկ Լամոս բերդը տիրում էր նրա ավագ եղբայր Վասակը⁹⁶: 1197 թ. Սմբատ Սպարապետը Հալկամին արդեն անվանում է «մեծագարմ իշխան», որը ներսես Լամբրոնացու հետ գլխավորեց Կոստանդնուպոլիս մեկնած հայկական պատվիրակությունը⁹⁷: Իսկ մի շարք բերդերի տեր Կիո Վարդին Սմբատ Սպարապետն անվանում է «Ատոմայ թոռն»⁹⁸: Միանգամայն համամիտ ենք Ղ. Ալիշանի այն կարծիքին, որ Կիո Վարդի Ատոմ պապը նույն ինքը՝ Պաղրասի տեր Սիր Ատան սենեսկալն է⁹⁹, որի բուն տիրույթը տարածվում էր Քարուտ Կիլիկիայի ծովափնյա ընդարձակ շրջանում և կոչվում էր «աշխարհ Սիրատնայ»¹⁰⁰:

«Տարեգրքի» անվանացանկերում թվարկված մյուս ավատառու իշխանները՝ Ռոմանոսը (Ամանոս), Նիկիֆորը, Խոսոֆորը (Խոսաֆ), Կեոսակը (Կիո Սահակ), Միխայլը (Մեխայլ), Կոստանդինը և իր եղբայր Նիկիֆորը, ազգությամբ հույներ էին և կառավարել են Կիլիկյան Հայաստանի արևմտյան շրջաններում գտնվող բերդերում: Վերոհիշյալ հույն իշխաններից Լավզատի և Դիմիտրուպոլսի բերդատեր Խոսոֆոր-Խրիսափորոսի մասին բյուզանդացի պատմիչ Հովհաննես Կիննամոսը տեղեկացնում է, որ Մանվել Կոմնենոս կայսրը 1159 թ. Իկոնիայի սուլթանության դեմ կռիվներում ստացել է հույն իշխան «Կիլիկեցի Խրիսափորոսի» զինակցությունը¹⁰¹:

Այսպիսով, ևեռն Բ Մեծագործի թագադրման հանդեսին մասնակցած ավատառու աշխարհիկ վերնախավի՝ բերդատեր իշխանների անվանացանկը Սմբատ Սպարապետի «Տարեգրքում» կարգված է որոշակի հաջորդականությամբ. 1—20-րդ տեղերում թվարկված են Կիլիկյան Հայաստանի արևելյան շրջաններում կառավարող բերդատեր իշխանները, 21—30-րդ տեղերում՝ կենտրոնական շրջաններում կառավարող բերդատեր իշխանները, իսկ 31—46-րդ տեղերում՝ արևմտյան շրջաններում կառավարող բերդատեր իշխանները: Հայոց բերդատեր իշխանների ազգային պատկանելության հանգամանալից քննությունից հետո միաժամանակ ակներև է դառնում, որ Կիլիկյան Հայաստանի կենտրոնական գավառներում XII դարի վերջին և XIII դարի սկզբին կառավարել են բացառապես հայազգի բերդատեր իշխանները, արևելյան գավառներում՝ ինչպես հայ, այնպես էլ արևմտաեվրոպական ծագում ունեցող (այսպես կոչված՝ ֆրանկներ կամ խաչակիր ասպետներ) բերդատեր իշխանները, իսկ արևմտյան շրջաններում՝ հայ և հույն (բյուզանդացի) բերդատեր իշխանները: Ընդ որում՝ բացարձակ մեծամասնություն են կազմում ազգությամբ հայ բերդատերերը (թվով 30 ավատառու): Մնացած

⁹⁵ Նույն տեղում, էջ 187:

⁹⁶ Տե՛ս նույն տեղը:

⁹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 207:

⁹⁸ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգրք, Փարիզ, 1859, էջ 119:

⁹⁹ Տե՛ս Ղ. Ալիշան, Աշխ., էջ 318—314:

¹⁰⁰ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգրք, Վենետիկ, 1956, էջ 222:

¹⁰¹ Տե՛ս Иоанн Киннам, Краткое обозрение царствования Иоанна и Мануила Комнинов, СПб., 1859, էջ 219:

16 բերդատեր իշխաններից 9-ը ֆրանկներ կամ խաչակիր ասպետներ են, իսկ 7-ը՝ հույներ (բյուզանդացիներ):

Հայոց բերդատեր իշխանների բազմազգությունը պայմանավորված էր 11—12-րդ դարերում Կիլիկիայում և շրջակա երկրամասերում տեղի ունեցած պատմական այն նոր իրադարձություններով, որոնք հանգեցրին էթնիկական փոփոխությունների: Դեռևս խաչակրաց Առաջին արշավանքի ժամանակ (1093—1099 թթ.) Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան առափնյա շրջանում, հատկապես Անտիոքի գավառում, հիմնվեց համանուն դքսությունը (1098—1268 թթ.): XII դարի առաջին կեսին խաչակիր ասպետները նվաճեցին շրջակա բազմաթիվ բաղաբներ ու բերդեր: Ամանոսյան լեռների և Ջահան քեօի ստորին հոսանքի շրջաններում զգալի տիրույթներ էին ձեռք բերել Հյուսիսկալիների և Տաճարականների հոգևոր ասպետական միաբանությունները¹⁰²: Այդ տարածքների ազատագրման համար Կիլիկիայի Հայոց Մեծ իշխանները բազմիցս զինաբախվել են Անտիոքի դքսության և Տաճարական ասպետների հետ: Այսպես, 1132—1136 թթ. Լևոն Ա Մեծ իշխանը համառ կռիվներ է մղել Անտիոքի դքսության դեմ՝ Կիլիկիայի Մամեստիա, Ադանա, Տարսուս քաղաքների և Սարվանդիքար բերդի համար¹⁰³, իսկ 1156 թ. Հայոց Մեծ իշխան Թորոս Բ-ն կռիվներ է մղել Անտիոքի դուքս Ռեյնալդ Շատրիլոյի և Տաճարական միաբանության դեմ՝ Ամանոսյան լեռներում գտնվող սահմանային բերդերի համար¹⁰⁴:

Արևմտաեվրոպական տարրի հոսքը դեպի Կիլիկիա նշանակալիորեն ուժեղացավ XII դարում: Մոսուլի աթաբեկության հարձակումների հետևանքով Եդեսիայի անկումից (1144 թ.), խաչակրաց Երկրորդ արշավանքի (1147—1148 թթ.) ձախողումից, Պաղեստինում և Հյուսիսային Ասորիքում խաչակրաց իշխանությունների դեմ Այուբյան սուլթան Սալահ ադ-Դինի շոշափելի հաջողություններից (1180-ական թթ.) և խաչակրաց Երրորդ արշավանքից (1189—1192 թթ.) հետո զգալի թվով արևմտաեվրոպացի ազնվականներ (գերմանացիներ, ֆրանսիացիներ, հոլանդացիներ, անգլիացիներ և այլն) աստիճանաբար հաստատվեցին Կիլիկիայի Հայոց պետության արևելյան շրջաններում: Նրանցից շատերը՝ իրենց վասալներով ու զորամասերով, ծառայության մտնելով Հայոց Մեծ իշխանության բանակում և կառավարման մարմիններում, փոխարենն արևելյան շրջաններում ստացան պարզեվական հողեր և մի շարք բերդեր: Այդ իրողությունը մեծապես արդյունք էր Լևոն Բ-ի յուրահատուկ և տվյալ ժամանակաշրջանում խելամիտ արտաքին քաղաքականության: Խրախուսելով խաչակիր ասպետների և նրանց մարտական ուժերի մուտքը Կիլիկիայի արևելյան շրջաններ՝ Լևոն Բ Մեծագործը ձգտում էր այնտեղ ստեղծել պաշտպանական ամուր գոտի՝ ընդդեմ շրջակա մահմեդական նվաճողների: Հենց այդ իրողությունն էլ իր արտահայտությունն է գտել երկրի արևելյան շրջաններում կառավարող Հայոց բերդատեր իշխանների էթնիկական պատկերում:

Կիլիկյան Հայաստանի արևմտյան շրջաններում հույն բերդատեր իշխանների առկայությունը հիմնականում պայմանավորված էր այնտեղ բյուզանդական տարրի դեռևս մասամբ պահպանվող ազդեցությունը: Երկրի արևմտյան շրջանները Բյուզանդական կայսրությունից ազատագրվեցին հիմ-

¹⁰² Տե՛ս Միխայել Ասորի, Ազվ. աշխ., էջ 435—436. The Chronography of Gregory Abu'l Faraj, p. 283; V. Langlois, Ազվ. աշխ., էջ 74—75:

¹⁰³ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Ազվ. աշխ., էջ 159—160:

¹⁰⁴ Տե՛ս Միխայել Ասորի, Ազվ. աշխ., էջ 485—486, The Chronography of Gregory Abu'l Faraj, p. 283:

նականում XII դարի երկրորդ կեսին, մասնավորապես՝ Հայոց Մեծ իշխան Ռուբեն Գ-ի կառավարման տարիներին (1175—1187 թթ.): Այդ շրջաններում նախկինում ժառանգաբար իշխող մի շարք հայ և հույն բերդատեր իշխաններ հավատարմության երդամամբ հնազանդվելով Հայոց Մեծ իշխանությանը՝ պահպանեցին իրենց հողատիրությունները և բերդերը:

А. М. АРШАМЯН — Феодалы — владельцы крепостей (բերդատեր իշխաններ) Киликийской Армении конца XII—начала XIII вв.—В статье обстоятельно освещаются персоны высшей феодальной знати Киликийского Армянского государства—46-и владетельных князей, принявших участие в коронации Левона II в 1198 г.

Определяются и уточняются местоположения владений и крепостей князей, устанавливается их должностной статус в системе управления государством.

Аналитическим сопоставлением персональных списков, приведенных в «Летописи» («полной» и «кратких») Смбата Спарапета (1208—1276 гг.), выявляется способ упорядочения перечисленных персон— в определенной последовательности и группировке по строго региональному признаку. Так, первые двадцать—это феодалы, правящие восточными областями страны, с 21—30—феодалы центральных областей, а с 31—46—феодалы западных областей.

Анализом приведенных в армянских и иноязычных источниках фактов определяется также этническая принадлежность владетельных феодалов. Становится очевидным, что в конце XII—начале XIII вв. центральными областями Киликийской Армении правили феодалы исключительно армянской национальности, восточными областями— как армяне, так и феодалы западно-европейского происхождения, западными областями— армяне и греки. Приводится также и мотивировка многонациональности феодального состава Киликийской Армении.